


պատճառած տանջանքը: Սէրը լաւ բան է նաև այն ժամանակի, երբ որ նոյն իսկ արցունքներ է թափել տալիս, մանաւանդ, որ սիրոյ մէջ չպէտք է վախենալ ոչ արցունքից, ոչ արբա-
մութիւնից: Բայց այն երկրում, ուր որ ա-
րեգակ է փայլում արցունք չգիտեն: Այն է մեր կենաց նախագաւիթը, լուսաւոր դրախ-
տը, որոնց բնակիչները բախտաւոր են, գիտե-
նալով որ կենացն են, որ տեսնում են իրար,
որ կարողանում են հեռուից իրար պաշտել
շատ անգամ լուռ և մունջ և ուրիշ աւելի պա-
հանջուննենալով: Մինք փափել ենք այդ դրախ-
տի դռները: Առանց սիրոյ երիտասարդութիւնը՝
նոյն է թէ առաւօտ առանց արեի: Եթէ, մեր
երիտասարդութիւնն այնպէս մնայլ է՝ պատ-
ճառն այն է, որ սէրն այլ ես հաւատ չի ազ-
գում: Երիտասարդների ճանապարհը՝ սէրից
հեռացնող ճանապարհ է: Կեանքն էլ հրաժար-
վում է այնպիսիներից, որոնք պղարում
են կենաց աղբիւրը: Նոքա էլ չեն տեսնի սէրը
իւր յաղթ գեղեցկութեան կատարելութեան
մէջ: Ոչ երկնքի կապյառը ոչ ծաղիկները, ոչ
կարկաչին վտակը չեն բաց անի նոցա տռաջ
իւրեանց խորհուրդը: Նոքա իրանց մերժուած
են զգում կեանքից – իսկ աւելի զարհուրելի
բանագրութիւն՝ չի կարող լինել: Իրանց թա-
ռամած հոգուն՝ ամբողջ աշխարհը թառա-
մած է թուռում: – Բայց ով որ ինքն իրան յար-
գումէ, նա միայն ունենումէ, մեծագոյն խրն-
գութիւններ որ յայտնի չեն միւսներին: Նոքա
երակներում հօսումէ առողջ և զօրեղ կեանք,
ինչպիս հիմքը կաղնու բնի մէջ, և իւր մա-
տաղ կրծքի մէջ ուրախութեամբ է թնդում
ամբողջ աշխարհը: Աշխարհի բոլոր մաշուած
կեանքերը չեն հաւասարի նոքա կենաց մի
ժամին:

Սիրոյ երկուորեակն է՝ պատճնեկան յա-
փրշտակութիւնը, որ աճում և նուազում է
սիրոյ հետ ի միասին: Անչ չափով որ սիրոյ
ընդունակութիւնն է թուլանում և սիրոյ
յատկութիւնն է ցածանում: այն չափով մեր
յափշտակութիւնն էլ թուլանում և փոխվում
է: Պաշտած սէրը աղբիւր է ոչ միայն բանա-
տեղութեան, ուրախութեան, ոգեորութեան,
այլ և զօրութեան և արիութեան: Ուրեմն
առաքինութեան գաղանիքը նա ունի, ով որ

արիութեամբ կուսութիւն է, պահպանում:
Գեղեցկութեան և հաւատարմութեան աշ-
խարհումն է զօրանում առաքինութիւնը,
որով մարդու սիրալը հասաւատ և անդրդուելի
է, զառնումն աչքը պարզվումէ և ձեռքը ըն-
դունակութիւն է ստանում ազգու հարուած-
ներ տալու: Անշուշտ ամենամեծ պարզե և
զօրութեան այսպիսի կենդրոնացումը, անձնա-
կան արժանեաց այս գիտակցութիւնը:

Բայց միթէ չպէտք է յիշենք և միւս
պարզել, որ մարմնով առողջ և սրտով մա-
քուր տղամարդը ստանում է իւր ընտրած
հարսնացուի հետ լծակից գառնալով: Նա միշտ
պէտք է գիտենայ այն պատասխանատուու-
թիւնը, որ իւր վերայ կը ծանրանայ, երբ որ
գառնայ ընտանեաց գլուխու ամսւանու պաշտ-
պան և զաւակաց հայր: Աղտոտել կենաց աղ-
բիւրը, տալ զաւակներին թերատ կեանք, վախ-
մարմին, մաշուած հոգի – ահա այն մեղքը,
որ աւելի կը խայլէ իմ խիղճը, քան Աս-
տուծոյ արեի տակ կատարուող միւս բոլոր
մեղքերը:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Օ Խ Ա Ն Օ Ճ Ն Ե Լ Ի .

Պւռումի թագաւոր շատ խասացաւ,
բոլոր կողեր զաւթեց, մեր խայու ազգ էն յը-
մալ նեղութուն քաշեց էնոց ձեռ օ իսկի
չեղեր ա, տախատկ կծակեն, կընցուցեն խա-
յու վիզ կելլին տախարկի վրէն ու կեր ու
խում կենեն:

Օխան Օճնելին էլ Մանգկերտու երկիր
առաջնորդ էր, զիշեր ու ցերեկ ուր ազգի
յարով Ասուն աղօթք կէնելք: — Եա՛ Ասոււած,

1. Պատմել է Խարայ Փրխուս գիշից Քրիստու Արհեցա (Սարիքեկ): Գրի և առել Ս. Հայկունի:

իմ խայու ազգ Կոստանոս թագաւորի ձեռքէն ազատ էնայ:

Մէկ Մէկմէտ մէլա կէր տաճկին, Շամ կը նստէր, ունէր ուրին սէքսան ջան ասկար:

Աստուածութեն էդ Օխան Օծնելին ու Մէկմէտ սիրելի աղբէր էրաց իրա իրարու, էրգի մէջ:

Աւուր մէկ օր խայոց կնկաց մէկ տղայ կը խիւընցնայ, էն յըմալ օ ցորեն խաց ու ուռումի ազգ մէր վերէն կտուեր էր. տղէն յանչ կըսկծի աչք էրաց.—Մարե՛, վասն ի Ասսու սիրուն, ձի կտոր մի խաց:

Մէրն դոր օ զարկուաւ, չկրցաւ ցորեն խաց խայու տուն գտեր էր, ասաց.—Լաօ՛, ևս իմալ էնիմ գորվի օ զացի ցորեն խաց ձեռքը չկպաւ:

Մօր չարան կտուաւ, գնաց ուռումի ֆըրօնձու մօտ, ասաց. Վասն ի Ասսու սիրուն, իմ տղէն խիւանդ աւ ցորնի խաց կուզայ:

Ֆրօնձին ասաց.—Խա, արի էս բան իր ձի էրայ, խաց տամ տուր քու տղին:

Կնիկ ուրին ուրին ասաց.—Խոզեր տամ էս յըմալ ազգի, էսրմայ առաջնորդի զիսուն, օ ֆրօնձին էլա ձի էսրմայ զրուցք էնայ:

Կնիկ դառ ու դարդակ ֆրօնձու մօտէն դարձաւ, գնաց առաջնորդի մօտ, վերուց ուր լաճուն թալեց առաջնորդի զիսուն վերեւ.—Կնիկ, ասաց, դու ընկնաւորար, ծռահր, էդ ինչ դաւի աւ:

Ասաց.—Նէ դու էղիս, նէ քու ազգ տիրել, ազգ շախել էղի:

—Կնիկ, մարե՛, յորի՞ն, ձանմ յորի՞ն, ասաց.

—Իմ տղէն խիւանդ աւ, աչք բացեց, ցորնի խաց ուզեց, չգտուաւ, գացի մըտ ֆրօնձին, հիւի, լաւի, դաւի էրեցի, ինչ օ էրեցի, չտուեց.—Խը ձի էսրմայ բան էրայ, ասաց.—Էս էլա ասի.—Փարազա իմ տղէն չմեռի, իդարան չըմ էնի:

Ասաց.—Կնիկ դաւակ, քու ձէն կտուայ, առ կոտ մը ալուր, գնաց շաղայ խաց թիստ, ևս էս ազգ եան պիթուն պիթունէ, պաի աւ զատիմ, եան պիթուն պիթունէ կուրիսիմ:

Ժողուեց րոլորի իշխաններ, խորխուրդ էրաւ, տկանց լեշի վերէն խագաւ մազեղէն

զարդուն շապիկ, վերե էլա խագաւ սեսուրը գեստիր, ժողովուրդին էլա ասաց.

—Ես կը կուրիսիմ, դոր կերթամ կերթամ, կեղի օ ուռումներ զիսի կը խարցուցին, դու ասէք, նուիրակ տէի զացեր աւ ազգի մէջ ժողովք էնայ:

Օխան Օծնելին առաւ, ուր փոքրաւոր, գընաց գնաց ի Շամ: զու դոր իս, գնաց էն տեղ օ զիշերուան էրազ տեսեր էր, գնաց Շամ: էլաւ դոււս:

Մամագ ասաց.—Տղա՛ ելէք մէ իշկէք էն ինչ ձիաւոր աւ, էկեր ա դուու:

Մարդ էկաւ տեսաւ, դարձաւ իներս, ասաց:

—Կըմանի էն մարդ օ դու զիշեր ցերեկ կզովաս թէ էս յըմալ մարդ տեսերիմ էրզի մէջ:

Մամագ լսելուն բաշտան բորիկ թռաւ գոււս տեսաւ օ ուր էրզի մէջ տեսած սիրելի աղբէրն աւ գրկեց, ոտք չմողեց գետին առեր էր, ատրաւ ի ներս ասաց.—Բարով աղբէր, բարով դու իմալ էկար ձի զատր:

Ասաց.—Աղբէր, ևս իմ նեղութեան, քեզի չկայ նեղութուն օ գաս, ձի գախ:

—Աղբէր, ասաց, կիշկիմ քու ոտք ու զլօին, քեզի ինչ նեղութուն կայ, ձիր Քրիստոս ճորով էգմալ զեստ խագաւ:

—Մամագ, մի իշկէր իմ դսու գեստեր, ներսի նեղութուն իշկայ:

Զուր ի յիրկուն մնաց, Մամագ մէկ էլա էտուր էրես զեստեր:

—Մամագ, ասաց, դահա հինգ սահաթ աս էրկու զիր իմ զեստեր իմ էրես կուտաս, զիւան խալվաթ էրայ (առանձնացուր). քիչ մը խօսք կայ իրտ քե:

Մամագ ժողովուրդ էխան դուս. Օխան ուր մէջք յարձկեց, ասաց.

—Մամագ, արի տես: Մամագ իշկեց մազեղէն շապիկ, ու էրկթէ զարգարներ մտեր ամսի մէջ:

—Եա, եա, ասաց. յորի՞ն էս յըմալ զքու լեշ ճզարեթի ևս տուե:

Ասաց—Մամագ, մէկ մարդու նեղութուն չեղին ուրին էսքան կրիբուայ:

—Քու նեղութուն ինչ բանի ձեռքէն աւ

— Իմալ օ իմ չան բիրեռներու մէջ այ իմ ազգ չորս էսյըմալ նեղութենի մէջ աշ վասն ի Աստրծու սիրուն՝ զու մէկ չարսմ էնիս:

— Եւ Օխան, էնի մի թագաւոր աշ խար կապեր ա եռ միմակ ունիմ սեքսան չան, զու իմալ նեղ տեղ մէկ կապեցիր ձի, ես իմալ էնիմ:

— Ես կը յուսամ Աստուած, զու օ սրտով գըլլպիս, Աստուած կը յաջողայ:

Ասաց—Դու օ էկար էն սեքսան չան զուրբան կենիմ քու ու զուրին:

Ասաց.—Ես էլա էն յըմալ թուր մը կօ- ծեմ օ Շամայ թալիս Ստամբուլ կառայ:

— Թէ! Աստուած զէդ քերիմ էրաց խըտ ձի, իմ թուր կառեց ես էլա քու ազգ պահ ալիրիմ չում յաւուր դատաստանին իմ ձեռ ամսիչավանի պահ բանիմ:

— Ես էլա թամզի կենիմ չուր յաւուր դատաստանին, նաքուսի զլօխ խարիր փարայ խարճ տայ իմ ազգ քեզի:

Օխան զազգ թամզիմ էրաց, թուրն օ- ծեց, տուեց Մամազին. էդ ապով Օխան Օծ- նելի կասեն:

Մամագ աշխար տուեր ա ուր առէջ ու կուգայ, շատ տեղ էդոր կոտակերու աւերիկու ձեն յըրփուաւ, շատ տեղ էդոր ասկերի առէջն կփախին, կելլեն սարերը: Խնքը կուգէր զօրտու կզարնէր, կտեսնէր, զար ու զարտակ աներ մաս ինք զուր ասկըին էն յըմալ դատաստան կեներ օ չեղի մէկ ասկար առիրութենի յա- րով էթ էր մաներ աներ:

Զախիրայ օ պէտք էդեր, Մամագ ինք կերթէր գեղի գարտակ աներու մէջ, կը զներ ոլըրի հախ ալըրի ամանի մէջ, ցորնի հախ ցորնի հոր կթալեր, ցանի հախ ցանանց, ու կերթէր:

Կտաեց ու տաճկցուց չուր խոսաւ Ռւու- կուտար: Գնաց կոստանոս թագաւոր, Կոստա- նոս բանէ խապար չուներ, նստեր էր ի Պա- լըզու ուրին կեր ու խում կէներ: Գացին, ասին. — Թագաւոր ապրած, Փաթէր Մամագ էկեր յըուեր ա Ստամբուլու մէջ, զու նստեր կեր ու խում կենես:

Թաթէր մէջ էլա ձուկ կեր կարմրուկ, ա-

սաց. — Զըմ խաւ ատայ, Էսա ձկեր օ սաղցան թաթէր ի մէջէն ջրի մէջ թռանու կը խաւ ատամ:

Ասու խրամանքով ձկեր թաթէր մէջէն թրփ թըրփ թռանու խաւուղի մէջ ընկանու կոս- տանոսի զիմուց զինին թափաւ, նոր հաւա- աւաց օղորիթ ա:

Փաթէր Մամագ լցուաւ Ստամբօք առաւ Այսասօֆիան, Այսկորիկին, Ընցաւ Այստա- ֆանու, Փաղլուայ չօրս բոլորը փաթտեց:

Փաթէր Մամագ մտաւ ի ներս, տաց կոստանոսին. — Իջիր թախտէն, խերիք ա. Աս- տուած քեզնէ առաւ:

• Փաթէր Մամագ տաց, ձի չում ճետ խօսոցին ժաման տուր:

Ասու խրամանքով ձկեր թէկեր զարկին, չորեք զիմաց զըմ զըմալէն զանէցին:

Դըռ արև չէր մտեր. կոստանոսին նոր խելք կառեց օ Աստուած ուրնէ առաւ, առեց Փաթէր Մամագին:

Դարձաւ կոստանոս ատաց. — Փաթէր Մա- մագ, թախտ կուտամ բայց իմ անուն չը կուրիսիս, սիքի (գրամի) մէկ էրես զիմ անուն զարկես:

Էս զրուցքէն Մամագի արարը ըռըքաւ. — Դըռ օլոր մալոր կը թալայ, տաց, քաշեց թուրը, կոստանոսի զիզը թաւաց:

Ստամբօւց Փաթէր Մամագ քեց, Ռւ- սումելուց էլա վեց թագաւորի խող առաւ: Աստրծուց շատ փախեցաւ, գարձաւ:

— Էս էլա խերիք ա ընձիր ատաց: Ամեն էլա մացին թուրը ձեռաց տակը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Մի ուսումնական գոներայաց, Նորերիս Ա- նետկում փախճանուել է Պանտէի քաջ տեղեակ Անտոնիո Մասչիոն, որ յայտնի էր ոչ միայն Խտա- լիոյում, այդ ասահանք կեանը նուիրել էր աստուածա- յին բանաստեղծի ուսումնասիրութեան և պաշ- տամն: Աւումնահանները խիստ գովել են գորա- զանազան հրատարակութիւնները Պանտէի մասին և Պաթուք -ի մեկնաբանութիւնները:

Այդ պարզ նաւագարին վիճակուած բախտը